ԱԶԳԱՑԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՄԻՒՌՕՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Վեհափառ և Սրբազնագոյն Հայրապետ ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգ Դ. Կաթողիկոս ի պէտս Եկեղեցեաց Հայոց կամի Աստուծով Ս. Միւռօնի օրհնութիւն կատարել ի 21ն Մայիսի ներկայ 1872 թուականիս ի Մայր Աթոռս Ս. Էջմիածնի, որոյ վասն կը փութամք ծանուցանել համայն Հայկազուն ժողովրդոց՝ հրաւիրելով զնոսա ի նոյն բաղձալի և հոգևոր մեծ հանդէս։

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ մեծապանծ և փառաւոր խորհրդաւոր արարողութեանց մինն և գլխաւորն է Ս. Միւռօնի օրհնութեան շնորհաբաշխ հանդէս, ուստի անշուշտ եմք՝ զի սիրելի Ազգայինք մեր յամենայն կողմանց աշխարհի հոգեռանդն անձկանօք պիտի դիմեն արժանանալ նոյն վսեմ հանդիսին տեսութեան և շնորհաց մասնակցութեան, միանգամայն նաև բազմադարեան շքեղափառ վկայից և պարծանաց Եկեղեցւոյ մերոյ Ս. Հայրացս և անգին և սրբազան հնութեանց ուխտի և այցելութեան պարտքը հատուցանելով՝ միսիթարվիլ հրճուանօք ըստ հոգւոյ։